



ՄՊՀՀ մամլո հաղորդագրություն # 7

Երևան, Հայաստան – Դեկտեմբեր 13, 2007թ.

Աննախադեպ «Աշխատանքի տոնավաճառ» Երևանում

13/10/07 10:00 – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պրն. Աղվան Վարդանյանը և ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի Առաքելության փոխտնօրեն տկն. Սինդի Փրուեթը, կառավարությունը և հասարակական կազմակերպությունները ներկայացնող այլ բարձրաստիճան հյուրերի հետ միասին բացեցին մեկօրյա աննախադեպ «Գտիր ինչ փնտրում ես» խորագրով աշխատանքի տոնավաճառը՝ ողջունելով այս գործատուներին կառավարության թիվ 3 շենքում (ժ.10:00-16:00):

Աշխատանքի տոնավաճառը, որը կազմակերպվել է 13 գործընկերների հետ համատեղ, ներկայացնում է թափուր աշխատատեղեր առաջարկող 100 գործատուի և մեծահասակների կրթության և ուսուցման հնարավորություններ առաջարկող ուսումնական հաստատությունների: Այն հանդիսանում է Հայաստանում «Մեծահասակների կրթության շաբաթվա» եզրափակող վերջին միջոցառումը, որի նպատակն է ի մի բերել մասնավոր և հանրային ոլորտները, «առաջարկը» (աշխատանք փնտրողներ) և «պահանջարկը» (գործատուներ) ներկայացուցնողներին: Լինելով իր չափերով և մասշտաբով առաջինը Հայաստանում այս աշխատանքի տոնավաճառը հնարավորություն է ընձեռում աշխատանք փնտրողներին հանդիպել թափուր աշխատատեղեր առաջարկող բազմաթիվ գործատուների, իսկ գործատուների համար այն յուրօրինակ միջոց է թափուր աշխատատեղերը լրացնելու և իրենց ընկերությունները ներկայացնելու համար:

Բացի աշխատանքային հնարավորություններ առաջարկելուց, տոնավաճառը նպաստեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության 15-ամյա գործունեության, ինչպես գործատուներին, այնպես էլ աշխատանք փնտրողներին նպատակաուղղված ծրագրերը ներկայացնելուն: Ինչպես նշվեց գործակալության պետ տկն. Սոնա Հարությունյանի կողմից, այս տոնավաճառը նոր արդյունավետ գործիք է գործակալության համար և կապող օղակ է հանդիսանում պահանջարկի և առաջարկի միջև:

Սիջազգային պրակտիկայում, աշխատանքի տոնավաճառները մեկօրյա միջոցառումներ են նախատեսված տարբեր որակավորումներ ունեցող հարյուրավոր աշխատանք փնտրողների համար: Որպես այդպիսին, տոնավաճառը արդյունավետ միջոց է հանդիսանում գործատուների համար՝ լրացնելու թափուր աշխատատեղերը, միանգամից հանդիպելով բազմաթիվ պոտենցիալ թեկնածուների իրենց մոտ առկա կամ ակնկալվող աշխատատեղերի համար, միևնույն ժամանակ գովազդելու ընկերությունը: Ինչպես հստակեցվեց պրն. Վարդանյանի կողմից՝ աշխատանքի տոնավաճառը աշխատանքի տոնավաճառը ռազմավարական քայլ է, որը միտված է աշխատանք փնտրողների և գործատուների անմիջական հանդիպումը արագացնելուն:

Իր բացման խոսքում տկն. Փրուեթը նշեց, որ գործազրկության կրճատումը պահանջում է համապարփակ մոտեցում՝ ներառելով թե՛ մասնավոր, թե՛ պետական ոլորտի միասնական ջանքերը՝ լուծումների հասնելու ուղղությամբ: Այս աշխատանքային տոնավաճառի հաջողությունը պայմանավորված է ՀՀ կառավարությունը, տեղական և միջազգային կազմակերպությունները ներկայացնող հետևյալ 13 գործընկերների արդյունավետ համագործակցությամբ:

Տոնավաճառի գործընկերները



ՀՀ ԱՄՀՆ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն



ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության հանակարգերի հզորացման ծրագիր



ԱՄՆ ՄԶԳ Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում ծրագիր



dvv international



ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ



Հայաստանում Ամերիկայի առևտրի պալատ



Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն



Մեծահասակների կրթության և ողջ կյանքի ընթացքում ուսումնառության ասոցացիա



Երևանի պետական համալսարան



Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարան



American University of Armenia



Բրիտիշ քաունսիլ



Հայաստանի պետական և ոչ պետական միջին և նախնական մասնագիտական ուսումնառության հաստատությունների տնօրենների միավորում